ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

19.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/50

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 05.12.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 05.12.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն 30.11.2017թ. հայտարարել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/11 ծածկագրով բաց մրցույթ, որի 114-րդ, 115-րդ, 116-րդ, 117-րդ և 118-րդ չափաբաժիններում պահանջվում են ախտահանիչ նյութեր: Այդ չափաբաժինների «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» Հավելված 1-ի «գնման առարկայի անվանումը և ապրանքի նշանը» սյունակներում նշված են կոնկրետ թվային, տոկոսային, ծավալային մեծություններ, որոնք պարունակում են տարբեր երկրների կոնկրետ արտադրողների կողմից արտադրվող՝ կոնկրետ բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցներին:

Վերոգրյալը ակնհայտորեն ապացուցվում է՝ երբ թիվ 114-րդ, 115-րդ, 116-րդ, 117-րդ և 118-րդ չափաբաժիններում առկա տվյալները համեմատում ենք ՀՀ ԱՆ կողմից հաստատված «Անիոզիմ ԴԴ1», «Անիոսժել», «Ժավել Աբսոլյուտ», «Հեքսանիոս Գ+Ռ» և «Պրեսեպտ» ախտահանիչ միջոցների կիրառման հայերեն հրահանգներում առկա

տվյալների «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի 2016թ. ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18 ծածկագրով մրցույթի թիվ 2, 51 և 52-րդ չափաբաժիններում առկա տվյալների, ինչպես նաև «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 2017թ. ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ ծածկագրով մրցույթի թիվ 1, 2-րդ, 3-րդ և 8-րդ չափաբաժիններում առկա տվյալների հետ: Որոշ չափաբաժիններում էլ ներառված տվյալները ամբողջական չեն համեմատած ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգների տվյալների հետ:

Պատվիրատուի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/11 ծածկագրով բաց մրցույթի թիվ 114-րդ, 115-րդ, 116-րդ, 117-րդ և 118-րդ չափաբաժինների մասով «գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում կոնկրետ արտադրողների կողմից արտադրվող՝ կոնկրետ բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցներին պատկանող կոնկրետ թվային, տոկոսային, ծավալային մեծությունների պահանջները խտրական պայմաններ են ստեղծում այլ արտադրողների՝ այլ անվանումներ ունեցող համարժեք ախտահանիչներ առաջարկող հնարավոր մասնակիցների համար, չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում, մրցակցության համար հավասար պայմաններ չեն ապահովում, չեն նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը, հակասելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

ա) Պատվիրատուի կողմից գնման առարկաների բնութագրերը կազմվել են հիմք ընդունելով ախտանիչ միջոցներ արտադրող ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի, ՌԴ «Ալ-Դեզ Քիմգործարան» ՍՊԸ-ի և բրիտանական «Ջոնսոն և Ջոնսոն» կորպորացիայի արտադրանքները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք պատկանում են կոնկրետ այդ արտադրողների՝ տվյալ բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցներին: Պատվիրատուի կողմից գնման առարկաների հատկանիշները կազմելիս թիվ 114-րդ, 115-րդ, 116-րդ, 117-րդ և 118-րդ չափաբաժինների մասով օգտագործվել են հղումներ ֆիրմային նշանին, արտադրողին և ծագման երկրին, սակայն այդ հատկանիշների բնութագիրը չի պարունակում «կամ համարժեք» բառերը, ինչը հակասում է ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 13 հոդվածի թիվ 5-րդ մասի պահանջին:

բ) Պատվիրատուի կողմից գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելը թիվ 114-րդ, 115-րդ, 116-րդ, 117-րդ և 118-րդ չափաբաժինների մասով հանգեցում է այլ

արտադրողների՝ այլ անվանումներ ունեցող համարժեք ախտահանիչներ առաջարկող հնարավոր մասնակիցների համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների համար, ինչը հակասում է ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 13-րդ հոդվածի թիվ 2-րդ մասի թիվ 1 և 2 կետերի պահանջներին:

գ) Պատվիրատուի կողմից գնման գործընթացը նման ձևով կազմակերպելը առաջացնում է խտրական հիմունքներ, ինչը չի նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը, հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 3-րդ հոդվածի թիվ 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին:

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 46-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից 30.11.2017թ. ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/11 ծածկագրով բաց մրցույթ հայտարարելու որոշումը թիվ 114-րդ, 115-րդ, 116-րդ, 117-րդ և 118-րդ չափաբաժինների մասով և դիմելով ՀՀ Գնումների Բողոքարկման Խորհրդին խնդրում է՝ ղեկավարվելով «Գնումների մասին»ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետով, պարտավորեցնել «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/11 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին, որպեսզի որոշում ընդունի՝ չկայացած հայտարարելու ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/11 ծածկագրով բաց մրցույթի հրավերը թիվ 114-րդ, 115-րդ, 116-րդ, 117-րդ և 118-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը ի լրումն բողոքում նշված հիմքերի, 11.12.2017թ. գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/11 ծածկագրով բաց մրցույթի թիվ 114, 115, 116, 117 և 118-րդ չափաբաժինների «Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում նշված բառային արտահայտությունները, կոնկրետ թվային, տոկոսային, ծավալային մեծությունները պատկանում են՝

- թիվ 114 չափաբաժնում՝ «Անիոզիմ ԴԴ1» բրենդային անվանումով ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի արտադրության ախտահանիչ միջոցին;
- թիվ 115 չափաբաժնում՝ «Անիոսժել» բրենդային անվանումով ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի արտադրության ախտահանիչ միջոցին;
- թիվ 116 չափաբաժնում՝ «Ժավել Աբսոլյուտ» բրենդային անվանումով ՌԴ «Ալ-Դեզ Քիմգործարան» ՍՊԸ-ի արտադրության ախտահանիչ միջոցին;

• թիվ 117 չափաբաժնում՝ «Հեքսանիոս Գ+Ռ» բրենդային անվանումով ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի արտադրության ախտահանիչ միջոցին;

• թիվ 118 չափաբաժնում՝ «Պրեսեպտ» բրենդային անվանումով բրիտանական «Ջոնսոն և Ջոնսոն» կորպորացիայի արտադրության ախտահանիչ միջոցին:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուն իր հրավերի թիվ 114-րդ, 115-րդ, 116-րդ, 117-րդ և 118-րդ չափաբաժինների մասով օգտագործել է կոնկրետ արտադրողի՝ կոնկրետ արտադրանքի կոնկրետ տվյալները, սակայն չի գրել «կամ համարժեք» բառերը, որով թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջի խախտում:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելը և գնման գործընթացը նման ձևով կազմակերպելը թիվ 114, 115, 116, 117 և 118-րդ չափաբաժինների մասով՝

ա) մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում այն հնարավոր մասնակիցների համար, որոնք կարող են առաջարկել այլ արտադրողների այլ անվանումներ ունեցող համարժեք ախտահանիչ միջոցներ՝ առաջացնելով չհիմնավորված խոչընդոտներ, որով թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի թիվ 1 և 2 կետերով սահմանված պահանջների խախտում,

բ) առաջացնում է խտրական հիմունքներ, ինչը չի նպաստում պայմանագրի կնքման նպատակով տարբեր արտադրողների՝ տարբեր անվանումներ ունեցող համարժեք ապրանքներ առաջարկելու ցանկություն ունեցող հնարավոր մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը, որով թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի թիվ 1 և 2-րդ կետերով սահմանված պահանջների խախտում:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Սմբատ Բալասանյանը:

2. <u>«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 08.12.2017թ. թիվ 08-410 գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի ապացույցների՝

ա) կետի վերաբերյալ.

Հրավերի թիվ 114-րդ, 115-րդ, 116-րդ, 117-րդ և 118-րդ չափաբաժինների մասով գնման առարկայ անվանումներում և տեխնիկական բնութագրերում բացակայում են որևէ հղումներ կոնկրետ արտադրողին կամ ֆիրմային նշանին, կամ ծագման երկրին և Մասնակցի մեջբերումները բացարձակապես չեն համապատասխանում իրականությանը: Այնուամենայնիվ, տեխնիկական բնութագրի ընդհանուր պայմաններում առկա է «կամ համարժեք» բառերի վերաբերյալ համապատասխան նշում:

բ) և գ) կետերի վերաբերյալ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 13-րդ հոդվածի՝

1-ին կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Հրավերի տեխնիկական բնութագրերը չեն հակասում նշված կետերից որևէ մեկին: Պատվիրատուն բնութագրերը կազմել է իր կարիքին համարժեք և բնութագրերում ներառել այնպիսի որակական չափանիշներ, որոնք անհրաժեշտ են և ոչ խտրական: Օրենքի պահանջով այդ նախատեսված տեխնիկական հատկանիշները հանդիսանում են նվազագույն պահանջներ և ցանկացած Մասնակից կարող է ներկայացնել դրանցից առավել՝ Պատվիրատուի կարիքին համապատասխանող հատկանիշներով, համարժեք ապրանքներ:»:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Կարեն Դրամբյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուդն ուսումնասիրել է «Խաչպար» (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՍՊԸ-ի կողմից 05.12.2017թ. ներկայացրած բողոքը, «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Խորհրդին ներկայացված 08.12.2017թ. թիվ 08-410 գրությունը, ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 06.12.2017թ ներկայացրած գրավոր դիրքորոշումը և կից փաստաթղթերը.

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն լաբորատոր և քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ հայտարարված ընթացակարգի թիվ 114-րդ, 115-րդ, 116-րդ, 117-րդ և 118-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում Պատվիրատուն չի գրել ո՛չ գնման առարկաների անվանումները, ոչ էլ նրանց ապրանքային նշանները, սակայն նշել է կոնկրետ արտադրողների («Անիոս», «Ալ-Դեզ Քիմգործարան», «Ջոնսոն և Ջոնսոն») կողմից արտադրվող՝ կոնկրետ բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցներին պատկանող կոնկրետ թվային, տոկոսային, ծավալային մեծությունների պահանջներ, որոնք խտրական պայմաններ են ստեղծում այլ արտադրողների՝ այլ անվանումներ ունեցող համարժեք ախտահանիչներ առաջարկող հնարավոր մասնակիցների համար:

Խորհրդում 08.12.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Խորհրդի այն հարցին, թե կարող է ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ բողոքում նշված գնման ենթակա ապրանքների հատկանիշները պատկանում են միայն ու միայն կոնկրետ արտադրողների՝ տվյալ բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցներին և դրանք չեն հանդիպում ոչ մի այլ արտադրողի համանման և համարժեք ախտահանիչ միջոցների մոտ, «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը պատասխանեց, որ միայն կարող է ասել, որ ՀՀ առողջապահության նախարարի կողմից համապատասխան հրամաններով հաստատված բուժկանխարգելիչ կազմակերպություններում ախտահանման և նախամանրէազերծումային մշակման համար ախտահանիչ միջոցի օգտագործման հրահանգներով առկա է միայն տվյալ

արտադրողների կողմից արտադրված մատնանշված ապրանքները, սակայն չի կարող ասել, որ հրավերով սահմանված գնման ենթակա ապրանքների հատկանիշները չեն կարող հանդիպել աշխարհում ոչ մի այլ արտադրողի համանման և համարժեք ախտահանիչ միջոցների մոտ:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերում բացակայում են որևէ հղումներ կոնկրետ արտադրողին, ֆիրմային նշանին կամ ծագման երկրին:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ Հրավերի տեխնիկական բնութագրերը չեն հակասում նշված կետերից որևէ մեկին, բնութագրերը կազմվել են «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքներին համարժեք և բնութագրերում ներառվել են, այնպիսի որակական չափանիշներ, որոնք անհրաժեշտ են և ոչ խտրական, և ցանկացած Մասնակից կարող է ներկայացնել դրանցից առավել՝ Պատվիրատուի կարիքին համապատասխանող հատկանիշներով, համարժեք ապրանքներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

- 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին,

տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Խորհուրդն արձանագրում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 05.12.2017թ. ներկայացված բողոքով չի հիմնավորվել և չի ապացուցվել այն հանգամանքը, որ նշված գնման ենթակա ապրանքների հատկանիշները պատկանում են միայն ու միայն կոնկրետ բողոքում նշված արտադրողների՝ տվյալ բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցներին և դրանք չեն հանդիպում ոչ մի այլ արտադրողի համանման և համարժեք ախտահանիչ միջոցների մոտ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 05.12.2017թ. «ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**